

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների, բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և նախարարի կողմից քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2013 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը քաղաքացիներից ստացել է թվով 90 առաջարկություն, դիմում և բողոք, որից՝ 11-ը համապատասխան հանձնարարականներով վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից

Դիմումները՝ ըստ բնույթի	Ընդամենը	Պատասխանվել է	Տրվել է դրական լուծում	Տրվել է պարզաբանում	Մերժվել է	Ծանոթություն
Առանց ավելացված արժեքի հարկի հաշվարկման և գանձման սերմացուների ներմուծման ենթակա լինելու վերաբերյալ եզրակացություն տրամադրելու մասին	8	8	8			
Հանրապետություն ներկրվող տոհմային երինջների խմբաքանակից երինջներ հատկացնելու մասին	16	15		15		15 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց դիմումները կքննարկվեն ՀՀ ներկրվող տոհմային երինջների բաշխման հանձնաժողովի կողմից և արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի: Միաժամանակ առաջարկվել է գործող կարգի համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել տեղեկատվություն իրենց կողմից տնօրինվող անասնաշենքերի և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների վերաբերյալ: 1 դիմում ընթացքի մեջ է:

<p>Անտառային հողատարածք վարձակալության հանձնելու, գույքի օտարման թույլտվություն ստանալու համար առանձին փաստաթղթերի պատճեններ տրամադրելու մասին</p>	9	8		8		<p>7 դիմումատուի պարզաբանվել է, որ անտառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվում է համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ լիազորմարմնի կողմից անցկացվող մրցույթի արդյունքում:          ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կհայտարարվի մրցույթ, որի մասին հրապարակային ծանուցում կտեղադրվի <a href="http://www.azdarar.am">www.azdarar.am</a> հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների և <a href="http://www.minagro.am">www.minagro.am</a> կայքերում:          1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա նույնաբովանդակ դիմումներին պատասխանվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2011 և 2013 թվականների համապատասխան գրություններով:          1 դիմում ընթացքի մեջ է:</p>
<p>Գյուղատնտեսական տեխնիկա հատկացնելու մասին</p>	6	6		6		<p>6 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N650-Ն որոշման՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու և քաղաքացիներին ու կազմակերպու-</p>

					յուններին տրամադրելու նպատակով <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամին փոխանցել է համապատասխան գումար: Վերջինս սահմանված պահանջները բավարարող դիմումատուներին լիզինգային կարգով կտրամադրի գյուղատնտեսական տեխնիկա: Միաժամանակ դիմումատուներին տեղեկացվել է, որ նրանց դիմումներն ուղարկվել է ՓՄՁ ՋԱԿ հիմնադրամ, որից և կստանան իրենց դիմումների պատասխանը:
Ոռոգման ջրի թերմատակարարման պատճառով կրած վնասը փոխհատուցելու, ջրամատակարարումը կարգավորելու, գետերի հունների մաքրման աշխատանքներ իրականացնելու, ջրամբարներ վերանորոգելու մասին	5	4		4	2 դիմումատուի պարզաբանվել է, որ հաշվի առնելով հարցի կարևորությունը Գավառագետի 2,2կմ ընդհանուր հատվածների մաքրման աշխատանքներն ընդգրկվել են 2014 թվականին իրականացվելիք հակահեղեղային միջոցառումների ցանկում: 1 դիմումատուի առաջարկվել է վնասի փոխհատուցման համար առաջնորդվել նրա և ՋՕԸ-ի միջև կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրով նախատեսված դրույթներով, իսկ նորմալ ջրամատակարարում հնարավոր է ապահովել նոր ջրախնայողական եղանակների ներդրման միջոցով: 1 դիմում վերահասցեագրվել է <<

						<p>ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտե:</p> <p>1 դիմում ընթացքի մեջ է:</p>
Աշխատած տարիների, աշխատավարձի չափի և սոցվճարումների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին	8	6	4	2		<p>2 դիմում վերահասցեագրվել է &lt;&lt;Հայաստանի ազգային արխիվ&gt;&gt; ՊՈԱԿ:</p> <p>2 դիմում ընթացքի մեջ է:</p>
Գյուղատնտեսության տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված առաջարկ-ծրագրերի իրականացման մասին	8	5		5		<p>3 դիմումատուի պարզաբանվել է, որ նրանց կողմից ներկայացված առաջարկությունները հաշվի կառնվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվող ծրագրերում:</p> <p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ միջազգային չափորոշիչներին համապատասխանող գինու լաբորատորիա ունենալու առաջարկն արդիական է և, ելնելով խնդրի կարևորությունից, այն ընդգրկվել է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 49 արձանագրային որոշման շրջանակներում 2012 թվականի նոյեմբերի 27-ին կայացած ՀՀ վարչապետին կից արդյունաբերական խորհրդի նիստում հավանության արժանացած Հայաստանի գինեգործության ոլորտի զարգացման ռազմավարության և դրա իրականացումն ապահովող 2012-2015 թվականների գործողությունների ծրագրում:</p> <p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ հողօգտագործման արդյունա-</p>

					վետության բարձրացման նպատակով ՀՀ կառավարության կողմից իրականացվում են գյուղատնտեսության աջակցության՝ սերմնաբուծության, պարարտանյութերի, դիզելային վառելանյութի, գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրեր, որոնց իրականացման արդյունքում 2011-2013 թվականներին շրջանառության մեջ է ներգրավվել շուրջ 34.4 հազ. հա վարելահող: 3 դիմում ընթացքի մեջ է:
Աշնանացան ցորենի սերմացու, պտղատու ծառերի տնկիներ, դիզելային վառելանյութ հատկացնելու մասին	3	3		3	2 դիմումատուի պարզաբանվել է, որ ծրագրում ընդգրկվելու և դիզելային վառելանյութ, աշնանացան ցորենի սերմացու ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել համայնքի ղեկավարին: Համաձայն ծրագրի՝ դիզելային վառելանյութի դիմաց վճարումը կատարելուց հետո, յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը հատկացվում է 1հա-ի համար մինչև 200 լիտր: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետությունում տնկանյութի արտադրությունը և իրացումն իրականացվում է առանձին սեփականատերերի կողմից: Չնայած, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տնկանյութի պաշարների չի

						տնօրինում, սակայն 2011-2013 թվականներին նախարարության աշխատակիցների միջոցների հաշվին նրան հատկացվել է տարբեր պտղատեսակների տնկիներ:
Կարկտահարությունից կրած վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու, վարկի մարման ժամկետն երկարաձգելու գործում աջակցելու մասին	3	3		3		1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դիմել է «Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ-Բանկ» ՓԲԸ-ին հնարավորության սահմաններում նրան աջակցելու խնդրանքով: Սակայն, բանկից ստացվել է պատասխան-գրություն, որում նշվում է, որ բանկի կողմից ընձեռվել են բոլոր հնարավորությունները՝ դադարեցվել են պարտքի գումարի վրա հաշվարկված տոկոսադրույքները, տույժ-տուգանքները: Սակայն, խախտվել են ձեռք բերված պայմանավորվածությունները և բանկը դիմել է դատարան գումարի բռնագանձման համար: 1 դիմում վերահասցեագրվել է ՀՀ Լոռու, 1 դիմում՝ Արագածոտնի մարզպետարաններ:

Տեղեկատվություն տրամադրելու մասին	3	3	2	1		1 դիմում վերահասցեագրվել է Երևանի քաղաքապետարան:
Սելիտրան տեղական արտադրության գրանույացված օրգանական պարարտանյութով փոխարինելու տեխնոլոգիան ներդնելու մասին	4	4		4		«Նախագահին, Ազգային ժողովի նախագահին, ՀՀ վարչապետին, ՀՀ գյուղատնտեսության նախարարին ուղղված դիմումների վերաբերյալ դիմումատուին տեղեկացվել է, որ թռչնաղբի արտադրության հարցը բազմիցս քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում: 2013 թվականի սեպտեմբերի 4-ին «Նոյան տապան» մեդիա հոլդինգում մի շարք լրատվամիջոցների մասնակցությամբ կրկին քննարկվել է հարցը և նրան տրվել են համապատասխան պարզաբանումներ:
Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կառավարման խորհրդի կազմում ընդգրկելու մասին	2	2	2			
Աշխատանքի ընդունելու և աշխատանքում վերականգնելու մասին	3	3		3		1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգի կազմակերպություններում դեռևս իրավաբանի մասնագիտությամբ թափուր աշխատատեղ չկա, այն առաջանալու դեպքում նրա խնդրանքը հաշվի կառնվի: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ անասնաբուժության բնագավառում նախատեսվում են բարեփոխումներ և հնարավորու-

						թյան դեպքում նրա խնդրանքը հաշվի կառնվի:
Տարաբնույթ հարցեր (գյուղատնտեսական մթերքների շուկան կարգավորելու, սեզոնային վաճառքի հովանոց-տաղավարներ ձեռք բերելու, «Ագրոսպասարկում» ՍՊԸ-ի հակասանիտարական վիճակի, մսի անօրինական վաճառքն արգելելու, բազմամյա անբասիր աշխատանքի համար կառավարական բարձ պարզևի ներկայացնելու, վառելափայտ տրամադրելու, գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և այլնի մասին)	12	8	1	7		4 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմում վերահասցեագրվել է Արագածոտնի մարզպետարան:
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>90</b>	<b>78</b>	<b>17</b>	<b>61</b>		<b>12 ընթացքի մեջ է:</b>

**2. 2013 թվականի հուլիս- սեպտեմբեր ամիսների ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարվել է քաղաքացիների 44 ընդունելություն**

<b>Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը</b>	<b>Ընդամենը</b>	<b>Պատասխանվել է</b>	<b>Տրվել է դրական լուծում</b>	<b>Տրվել է պարզաբանում</b>	<b>Մերժվել է</b>	<b>Ծանոթություն</b>
Աշխատանքով ապահովելու մասին	4	4		4		
Գյուղատնտեսական բացօթյա շուկայի տարածքում վաճառասեղան հատկացնելու մասին	7	7	7			
Գյուղատնտեսական մթերքների իրացման գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1		1		
Պարարտանյութի օգտագործման տեխնալոգիայի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրելու մասին	1	1		1		
<<Հայաստանի Հանրապետությունում 2010–2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման> ծրագրում ընդգրկելու մասին	6	6		6		
Դիզելային վառելիք տրամադրելու մասին	4	4		4		
Սպանդանոցներ հիմնելու մասին	1	1		1		
Տոհմային երինջներ հատկացնելու մասին	15	15		15		
Զկնաբուծության ոլորտում առկա հիմնախնդիրների մասին	1	1		1		
Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկաժ խոզերի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	4	4		4		
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>44</b>	<b>44</b>	<b>7</b>	<b>37</b>		